

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

Ի Ս Ա Հ Ս Ա Յ Ա Յ Ձ Ե Ն ՈՒ Մ Ն

• Որ զփրկական քո օր
 Անարատ պատարագիդ գեղումն
 Յանկացաւ Աբրահամ տեսանել,
 Ետես ՍաՀակաւ եւ ցնծացաւ,
 Ն. ՇՆՈՐՀԱԼԻ.

Հաւախօսի վերջին պահուն,
 Երբ Աբրահամ վրանայարիին
 Ներքեւ հանդիստ ննջէր ի քուն,
 Խիղճքն մաքուր, սիրան անխուփ,
 Ձէր վրդովեր նորա քուն:
 Ձայն մի կանչեց, ձայն հաւուն չէր,
 Ձայն երկնային հրեշտակին էր,
 Աբրահամ, Աբրահամ:
 Ձարթեաւ իսկոյն մեծ նահապետ,
 Ահաւասիկ պատրաստ եմ, Տէր:
 Ա՛ն սիրելի որդիդ Սահակ,
 Տնր Սաղիմայ բարձանց վերայ,
 Հան ողջակէզ Տեառն Աստուծոյ,
 Չոր դու պաշտես և հաւատաս:
 Տէր, Քո հրաման միշտ օրհնեալ է.
 Դու ինձ տուիր Սահակ որդիս,
 Իսկ այժմ յինէն առնել կամիս:
 Օրհնեալ ես Դու, օրհնեալ Քո կամք.
 Թէ Աբրահամ և թէ Սահակ
 Քոյդ են, սփ Տէր, ինչպէս կամիս.
 Չի Քո սուրբ կամք բարի է միշտ:
 Տէր, Դու գիտես, ես չեմ մտնար,
 Ես յուշ բերեմ Քո այն խոստումն,
 Թէ աշխարհիս ազգ և ազինք
 Պիտի օրհնին իմ զաւակովս,
 Այնչափ աճին ու բազմանան,
 Ինչպէս աւազ ծովափերուն,
 Եւ կամ երկնուց աստղերուն չափ:
 Ասաց ինքնին Հայր Աբրահամ.
 Բարի Աստուած, զոր ես պաշտեմ,

Ձառնէ չար ինչ իւր ծառային,
 Խորհուրդ է այս, զոր չգիտեմ,
 Աստուծոյ բան է, սփ գիտէ:
 Ես ծառայ եմ, հող ու մոխիր,
 Տիրոջ հրաման պէտք է լսեմ:
 Դժար մի բան կայ իմ առաջ,
 Ի՛նչպէս ծածկեմ բան Սառայէն,
 Հապա եթէ լսէ Սառան,
 Միթէ թողնու մայրենի գութ,
 Ողջակիզել միակ որդին:
 Նա Իսմայէլ տնէն հանեց,
 Որ իմ Սահակ ծառանդ լինի:
 Հազար անգամ աղաչեցի,
 Չրկանք չանել խեղճ Հազարին.
 Ես զարմացայ, երբ Տէր Աստուած
 Հաւանեցաւ կնոջ խելքին,
 Ինձ հրամայեց, որ հետեւիմ:
 Ձէ, չեմ ասեր ես Սառային,
 Ես տի պահեմ այս բան գաղտնի:
 Այլ ինձ ի՛նչ փոյթ քննել այս բան,
 Խախտել հաւատս իմ աներկբայ.
 Կամ վարանիլ, տարուբերիլ.
 Միթէ ես ծառ եմ հոգմալար,
 Եւ կամ մի մարդ թերահաւատ:
 Թէ պակասի Սահակ որդիս,
 Մնամ անժառանգ և անորդի.
 Միթէ չկարէ Տէրն իմ կարող,
 Ժեռ քարերէն հանել որդիս
 Իւր ծառային Աբրահամու:
 Ամուլ պառաւ էր Սառայ կինս,
 Ի՛նչպէս ծնաւ նա աւետօք,
 Իմ անգրանիկ Սահակ որդիս:
 Չկարէ միթէ կրկին ծնանիլ
 Մի այլ Սահակ նոր աւետօք:
 Ասաց այս բան Հայր Աբրահամ,
 Կապեց գօտին, պնդեց հաւատ:
 Առաւօտու արշալոյսին
 Փայտ կոտորեց բարձեց իշուն.
 Ինքն և Սահակ, երկու ծառայք,
 Կազմ և պատրաստ ելան ճամբայ:
 Գնացին, զնացին մինչ երեք օր,
 Հայր Աբրահամ գիտեց հեռուստ,
 Նա նշմարեց լերան բարձունք,
 Ուր լուսաթիւ հրեշտակ մի կար,
 Ողջակէզին սուրբ տեղն էր այն:
 Կացէք, ասաց իւր ծառայից,

Սպասեցէր մինչև դառնամ,
 Ես և որդեակին իմ Իսահակ
 Երթամք տեղին այն սրբավայր,
 Երկրպագեմք Տեառն Աստուծոյ:
 Հայր Աբրահամ էջը թողուց,
 Փայտեր բարձեց Սահակին ուսն.
 Երջանիկ էջն Աբրահամու
 Կցորդ եղաւ խաչի գործին,
 Ինչպէս Սիմոն Կիւրեանացին:

Մինչ երթային հարցուց Սահակ,
 Հայր, ահա հուր և ահա փայտ,
 Ո՞ւր է ոչխար մեր ողջակէզ:
 Պատասխանեց Հայր Աբրահամ:
 Դու մի հողար, որդեակ իմ, այդ,
 Թողունք, Աստուած թող պատրաստէ
 Իւր ողջակէզ և պատարագ:
 Ասաց Սահակ, ինչ բան է այդ,
 Ո՞վ է լսել, ո՞վ է տեսել,
 Որ ինքն Աստուած իւր ողջակէզ,
 Ինքն հողայ և պատրաստէ.
 Հապա ինչ է մարդոյն նուէր,
 Կամ պատարագ ընծայարեր:
 Մեք ազբան եմք և չքաւոր,
 Աստուած օրհնել է մեր տուն.
 Հազար հազար ոչխար ունիմք
 Մեք ի դաշտին արօտական,
 Միթէ խնայեր մի պարարտ խոյ
 Ողջակիղել Տեառն Աստուծոյ:

Այլ մինչ հասին այն սուրբ տեղին,
 Հայր Աբրահամ չկարաց պահել.
 Պատմեց որդոյն իւր Սահակայ
 Ծածկեալ խորհուրդ ողջակիղին:
 Ասաց, որդեակ, իմ Տէր Աստուած,
 Զօր ես պաշտեմ լի հաւատով,
 Կա հրամայեց իւր ծառային,
 Որ սուրբ լերանս բարձանց վերայ
 Զբեղ ողջակէզ հանեմ նըմա:

Ասաց Սահակ, Դու ինչ ասիր:
 Ասի, Պատրաստ եմ աւասիկ:
 Ես էլ, ո՞վ Հայր, նոյն ասեմ քեզ,
 Թէ աւասիկ պատրաստ եմ ես:
 Որչափ ուրախ լինիմ, ո՞վ Հայր,
 Թէ ընդունի զոհն իմ Աստուած:
 Ապրի՛ս, որդեակ իմ դու հնազանդ,
 Զօհի փայտեր ուսէզ վար առ,
 Շինեմք սեղան փայտեր վերէն:

Ժամ է ահա, թոյլ տուր սրգեակ,
 Կապեմ ստներդ և քո ձեռներդ.
 Որ չը շարժիս և խըլլաիս,
 Արիւն ցայտէ իմ հանդերձիս:
 Հայրիկ, ժըտեմ, զիս մի կապեր,
 Հողով սրտով խոնարհ եմ ես.
 Միթէ չունիմ ես քո հաւատ,
 Զի քո սրդին եմ հարազատ:
 Թոյլ տուր ինքնին ես կամովին
 Զիս տարածեմ սեղնի վերէն.
 Թեւերս պարզեմ խաչանըման,
 Այնպէս մեամ անշարժ հանդարտ,
 Ինչպէս դառնուկ մի անմուռնչ,
 Դու կատարէ զօհին սուրբ գործ:
 Զէ, որդեակ իմ, թող տուր կապեմ,
 Կապանքն էլ իւր խորհուրդն ունի:
 Ասաց Սահակ, Հնազանդ եմ, հայր,
 Արա՛, ինչպէս Աստուած և դու
 Դիտեք ձեր բան և ձեր խորհուրդ:
 Երկինք, գետին, դուր լուս կացէք
 Եւ դիտեցէք զօհիս հանդէս:

Հայր Աբրահամ մինչ պատրաստ էր
 Զօհին սուրբ գործ փոյթ կատարել,
 Վերէն երկնուց բարձրութենէն
 Դիտեց Աստուածն Աբրահամու,
 Ասաց Որդւոյն իւր Միածնին.
 Արի ի՞նչեմք Երուսաղէմ,
 Վէր ամպերուն նստեալ նայիմք
 Միօնի լերան բարձանց վերէն,
 Ես ցոյց տամ քեզ նախատօնակ
 Գո հանդերձեալ խաչի տօնին:
 Հանդիսադիրն է Աբրահամ,
 Պատարագիչ և քահանայ.
 Ո՞վ է օրհներ զինք քահանայ,
 Մեղքիսեթեկն է օրհներ:
 Տես Դու, Որդեակի, ուսիր այժմէն,
 Խաչիդ նկարն է Իսահակ:
 Որդին տեսաւ սիրտ գործվեց,
 Սահակ կապուած սեղնի վերէն,
 Վիղբն պարզած և ուն ի ձիգ,
 Այնպէս պատրաստ էր խեղճ դառնիկ.
 Այլուք որորմ հայեր ի վեր,
 Որ իբր անխօս աղերս ածէր.
 Ո՞վ Միածին Որդի Գո Հօր,
 Ես էլ իմ հօր միածինն եմ,
 Դու բարեխօս եղիր առ Հայրդ:

Ահա հայրն իմ սուր վերուցեր,
 Ասէ. Աստուած է հրամայեր,
 Զքեզ ան զինու՛մ ես ողջակէզ:
 Սրտառուջ բան Իսահակին
 Շարժեց ի գու՛թ սիրոյ Որդին.
 Մատեաւ իսկոյն աղերս մատոյց,
 Հայր իմ, Քո կամք միշտ արգար է
 Եւ Քո վճիռն անդարձ է.
 Խաչի վճարն իմ պարտիրն է:
 Դու գիտես, Հայր, և ես գիտեմ,
 Իսահակայ ողջակիզումն
 Չկարէ փրկել աշխարհ ողջոյն:
 Խեղճ է Սահակ միակ որդին,
 Զոր աւետեօք ծնաւ իւր մայր:
 Հայր Աբրահամ խաղ չբխտէ,
 Մեք փորձ արինք, նա կրտսուգէ
 Եւ ցոյց տայ մեզ իւր մեծ հաւատ:
 Հրաման սուր Հայր, իջնամ արագ
 Եւ ազատեմ գառնուկ Սահակ:
 Գիտեմ, Որդեակ, սէրդ անհուն է,
 Արգահատիս Դու առ մարդիկ.
 Գնան, փրկիր զենման սրէն
 Քո նախատիպն այն Իսահակ.
 Զի Քո անուն վազ կնքած եմ,
 Դու Փրկիչ ես ազգի մարդկան:
 Բայց գիտես Դու, մեր Աբրահամ
 Առանց զո՛հի չկարէ մնալ,
 Աստուածապաշտ հոգի նորա
 Դուցէ խռովի և սիրտ մնայ,
 Թէ Տէր Աստուած չընդունեց զո՛հս:
 Ես հրեշտակին պատուէր տուի,
 Որ երկնային մեր հօտերէն,
 Մի պարարտ խոյ և անարատ
 Առնու բերէ Սիօնի բարձունք
 Եւ Սարեկայ ծառէն կախէ:
 Դու ցոյց տուր այդ Աբրահամու,
 Թող Սահակայ փոխան զենէ:
 Գիտես, Որդեակ, Սարեկայ խոյն,
 Որ կախուած է եղջիւրներէն,
 Այդ էլ իւր մեծ խորհուրդն ունի:
 Ժանդ որդիքներ Իսրայէլի,
 Որոց համար էր քո սուրբ կեանք,
 Պիտի կախեն կեանքդ ի փայտէն՝
 Ինչպէս խոյիկն այն եղջերէն:
 Պիտի տեսնան իրենց աչքով
 Որդիքն չար և ապիրատ:

Զոր գուշակեց ծառայն Մովսէս:
 Սարեկայ ծառն և կախեալ խոյն
 Մի այլ նկար է Քո խաչին:
 Իջիր այժմիկ, Որդեակ իմ Դու,
 Քեզ սպասէ կապեալ Սահակ:
 Էջ ի Հօրէն Փրկիչ Որդին,
 Լոյս ծաւալեց Սիօնի սուրբ լեռ,
 Լուսոյն միջէն ձայն մի հնչեց,
 Զայն Փրկիչին էր ազատարար.
 Շրտեցաւ յոյժ Հայր Աբրահամ,
 Սուրն ի ձեռին դող տուց:
 Է՛, Աբրահամ, Աբրահամ,
 Դարձուր քո սուր պատանեկէզ,
 Բաւ է այդչափ, փորձ լրացաւ,
 Ես գիտէի և գիտացի,
 Թէ երկիւզած ես Աստուծոյ:
 Դու վեր նայիր, ո՞վ Աբրահամ,
 Տես Սարեկայ ծառի ճղէն
 Խոյ մի կախուած եղջիւրներէն,
 Առ դու զենէ այդ ողջակէզ,
 Քոյդ Սահակայ փոխան է այն:
 Տէր քեզ բաշխեց Սահակ որդիդ,
 Մեծ հաւատոյդ շնորհ է և զին:
 Երբ Աբրահամ անակնկալ
 Տեսաւ այս բան և զարմացաւ,
 Հողին ցնծաց, սիրտ հրճուեցաւ,
 Անպատում էր իւր ցնծութիւն.
 Եւ ո՞վ կարէ ճառել զայն:
 Իսկոյն արձկեց կապեալ Սահակ,
 Սահակն ելաւ կանգնեց ողջամբ,
 Ողջագուրեց զինքն Աբրահամ:
 Ասաց, Որդեակ, չասի՞ ես քեզ,
 Տեսան ինչպէս Տէր պատրաստեց
 Իւր ողջակէզ և պատարագ:
 Ուստի էր խոյն ի Սարեկայ,
 Ո՞վ էր կախեր ծառէն ի վայր,
 Արդեօք երկնու՞ց բերաւ հրեշտակ.
 Զէ նորաստեղծ մի խոյ է նա,
 Մեր խոյերուն չէ նա նման.
 Եղջիւրիկներն են խաչածև
 Եւ ծայրերէն արիւն կաթէ,
 Գեղմն կարմիր բոսորագոյն,
 Աչկունք բացեր նայէ ողորմ:
 Հեզ է այս խոյն, կապ չէ պիտոյ,
 Տես ի՞նչպէս կայ, չհանէ մտունչ:
 Բռնէ ոտքէն և ես դլխէն,

Պարզենը այնպէս սեղնի վերէն,
 Ես կը զենեմ, դու փայտ վառէ,
 Ողջակիզեմը երկնից պարզեւ,
 Որ աղաթեց քո կեանք մահէն:

Ասաց Սահակ, օրհնեմք Աստուած,
 Օրհնեմք իւր ձեռք, որ շուտ հասաւ.
 Թէ չհասնէր այդ օրհնեալ ձեռք,
 Վաղուց քո սուր զիս զենում էր.
 Եւ դու ինչպէս դառնայիր տուն,
 Հարցնէր Սառան ծնող մայրիկս,
 Ի՞նչ պատասխան պիտի տայիր:

Իրաւ է այդ, որդեակ Սահակ,
 Պատուէր տամ քեզ՝ դու պահէ զայն,
 Սառային՝ մօրդ մի յայտներ բան:
 Դու լաւ գիտես քո մօր բնութիւն,
 Յասկոտ, խոժոռ կին է Սառան,
 Պատմեմ, որդեակ, քեզ անցեալ բան:
 Երեք հրեշտակք մեզ հիւր եկան,
 Ինձ աւետիս տուին ուրախ,
 Ասին. Սառայ կին քո պառաւ.
 Քեզ տի ծնի մի նոր զաւակ:
 Սառան լսեց վրանին ետեւ,
 Ծիծաղեցաւ թերահաւատ:
 Լսիր, որդեակ, ուսիր այս գաս.
 Ինչ որ մարդոց անհնար է,
 Աստուծոյ մօտ հնարաւոր է:

Այսպէս ահա Հայր Աբրահամ
 Իւր Սահակայ ողջակիզով
 Խաչին խորհուրդ ճիշտ նկարեց,
 Իսկապէս և գործնապէս:
 Այլ մարգարէք միայն բանիւ
 Գուշակեցին խաչին խորհուրդ.
 Իսկ Աբրահամ հանեց ի ցոյց
 Խաչին պատկեր և տեսարան:
 Որչափ նման և իսկատիպ.
 Մարդ ի հայելոյն հիանայ:

Որ խանդակաթ եմ առ ի սէր
 Խաչի ճառին և Խաչելոյն,
 Ես հայեցայ Հայոց Հայրիկս,
 Բան ստեղծի, ընդարձակեցի
 Իսահակայ զենման խորհուրդ,
 Սուրբ Շնորհալին Շարակնոցին
 Չորս սողերով ըովանդակէ:
 Չոր նուիրեմ այն հօրերուն
 Բարի պտուղ որդիներուն,
 Որ հաւատով որդիացած

Կոչին որդիք Աբրահամու:
 Այլ ոչ նման հրէից ազգին,
 Որք պարծէին և պանծային,
 Մեք որդիք եմք Աբրահամու,
 Այլ ի գործոցն հեռացեալ,
 Չոր կշտամբէր Փրկիչ Յիսուս:
 Այլ ճշմարիտ որդիք լինել,
 Գործել զգործն Աբրահամու.
 Զի սոսկ հաւատ չունի արդիւնք,
 Եւ համարի մեռել անշունչ,
 Գործ միացած հաւատոյն հետ,
 Կենդանանայ հաւատն անշունչ.
 Երանի՛ր որ ունի զհաւատն,
 Բարի գործով իւր պսակեալ:

Ո՛վ դու Աստուած Աբրահամու,
 Դու մի հաներ յինէն հաւատ,
 Մինչև երթամ ի գերեզման,
 Էլ չեն պիտոյ ինձ անդ հաւատ.
 Այլ դէմ առ դէմ սուրբ տեսութիւնդ.
 Աբրահամու գօգն ընդարձակ
 Տուր ինձ տեղի մի անկիւնակ,
 Ղազարոսին մօտ ընակիմ.
 Զի սիրեցի քո աղքատներ,
 Եւ քո սիրած այն փոքրիկներ,
 Մեր աշխարհի անարգուածներ,
 Չորս Դու փոխան Քեզ համարես:
 Ո՛վ Յիսուսի դուք փոքրիկներ,
 Միջնորդ կացէք առ Տէրն մեր
 Վասն անարժան հէգ ծառայիս.
 Ես էլ ձեզ հետ ի միասին
 Մանեմք ի գուռն ուրախութեան,
 Որ պատրաստեալ է սիրելեաց:

